Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԽՈՐՀՈՒՐԴ) ՆԻՍՏԻ

2026 թ. մարտի 31

Նախագահում էր՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին Խորհրդի անդամներ

Անուշ Թութիկյան	Ամերիկայի հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» ԲՀԿ
Հասմիկ Գևորգյան	«Արդարության նոր մշակույթ» ՀԿ
Գրիգոր Հովհաննիսյան	«Ակցիա սովի դեմ» հիմնադրամ
Լիլիթ Ադամյան	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Աննա Հովհաննիսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
Նաիրա Ավետիսյան	Ֆիզիկական անձ
Նաիրուհի Սաֆարյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Տիրուհի Նազարեթյան	«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» հանրապետական միություն
Աննա Մելիքյան	«Փինք» ՀԿ
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ
Արամ Ստեփանյան	«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» ՀԿ
Վահե Արզումանյան	«Սպիտակ ձեռնափայտ» ՀԿ
Մարգարիտ Ստեփանյան	«Կանայք հանուն բնության» ՀԿ

Անահիտ Պապիկյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Ռուզաննա Տոռոզյան	«Վիններթ Գորիս» հիմնադրամ
Նաիրա Հարությունյան	«Դու մենակ չես» կանանց աջակցման ՀԿ
Սևակ Գալստյան	Ֆիզիկական անձ
Հերմինե Այվազյան	«Արևամանուկ» հիմնադրամ
Քրիստինե Մխիթարյան	«ՕքսԵՋԵՆ» հիմնադրամ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հկ

Բացակայում էին

Տաթևիկ Աղաբեկյան	«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ
Հունան Հունանյան	«Սատար» ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Արտաշես Տոռոզյան	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
Ժասմենա Խաչատրյան	«Գորիսի նոր սերունդ» ԲՀԿ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին՝

Լուսինե Քոչարյան	Նախարարի տեղակալ
Լիանա Թովմասյան	ՄՍԾ պետի տեղակալ
Նվեր Կոստանյան	Մամուլի քարտուղար
Ժորա Սարգսյան	Աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Ռուզաննա Պեպանյան	ԱՍՀՆ զբաղվածության բաժնի պետ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Զբաղվածության պետական ծրագրեր

2. Հարց-պատասխան, քննարկում

Նախագահը մինչ Խորհրդի նիստի օրակարգային հարցերին անդրադառնալը ողջունեց Խորհրդի անդամներին՝ տեղեկացնելով, որ նիստերը ուղիղ հեռարձակմամբ անցկացնելու ձևաչափը հասարակական խորհրդի աշխատանքները հանրությանը իրազեկելու անհրաժեշտությամբ է պայմանավորված: Կարևորելով մրցունակ աշխատուժի ձևավորման ու աշխատանքային հնարավորությունների ընդլայնման միջոցով զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերի դերը՝ Նախագահը նշեց, որ ոլորտի բարեփոխումների հիմնական նպատակը քաղաքացուն արժանապատիվ, մշտական ու պետության զարգացմանը նպաստող աշխատանքով ապահովելն է: Այս համատեքստում կարևորեց աշխատանք փնտրողների և գործատուների փոխգործակցության, սոցիալական գործընկերության զարգացման, ավագ սերնդի ներուժի օգտագործմանն ու աշխատանքային իրավունքների իրացմանն ուղղված աշխատանքների շարունակականությունը:

Նախագահը հավելեց նաև, որ ներկայում աշխատանք փնտրողների և գործատուների կապը դեռևս իրականացվում է էլեկտրոնային փոստերի միջոցով, և վերլուծությունների արդյունքները վկայում են, որ մեծաթիվ են աշխատանք փնտրողների էլեկտրոնային հասցե և/կամ թվային բավարար գիտելիք չունեցողները, ինչով պայմանավորված գործազուրկ անձանց համար ԿԳՄՍՆ-ի, ԲՏԱՆ-ի և այլ գործընկերների հետ համատեղ նախաձեռնվում է մշակել զանգվածային թվային գրագիտության ծրագիր, որի ընթացքում քաղաքացիները ստանալով բավարար թվային գիտելիքներ ու հմտություններ, ավելի դյուրին և արդյունավետ կդարձնի գործատուների հետ փոխգործակցությունը, ինչպես նաև իրենց տվյալները «e-work.am» հարթակ տեղադրելու գործընթացը :

Նախագահն անդրադարձավ նաև զբաղվածության որոշ ծրագրերին՝ հատկապես կարևորելով բիզնես ուսուցում և խորհրդատվություն իրականացնող կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը և բիզնես ուսուցման գործընթացի կազմակերպումը Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանման ծրագրում:

Այնուհետև Նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանն ու ՄՄԾ պետի տեղակալ Լիանա Թովմասյանը խորհրդի անդամներին ներկայացրեցին զբաղվածության ընթացիկ ծրագրերը՝ մասնավորապես.

- Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանում,

- անապահովության գնահատման համակարգով անապահով ճանաչված ընտանիքի աշխատունակ անձանց համար կաճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպում,
- անձնական օգնականի ծառայության տրամադրում,
- անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանում,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովում,
- անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև 3 տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար պետական աջակցության տրամադրում:

Նախագահը նիստի անդամներին իրազեկեց նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց և 63-ից բարձր տարիք ունեցող անձանց զբաղվածության ապահովման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի շրջանառման և դեռևս հանրային քննարկման փուլում գտնվելու մասին:

Նիստը շարունակվեց հարց ու պատասխանի ձևաչափով, որի շրջանակում խորհրդի անդամները բարձրաձայնեցին իրենց հետաքրքրող հարցերը, հանդես եկան մի շարք առաջարկություններով:

«Կանայք հանուն բնության» հկ–ի նախագահ Մարգարիտ Ստեփանյանը ներկայացրել է իր դիտարկումը՝ «Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանում» ծրագրի վերաբերյալ: Մասնավորապես, ծրագրի շրջանակում բիզնես ուսուցում և խորհրդատվություն իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները վերանայման կարիք ունեն: Ներկայում առաջնահերթ դիտարկվում է կազմակերպության՝ բիզնես ուսուցման ոլորտում փորձ ունենալու հանգամանքը, ինչը սահմանափակում է մարզային կառույցների մասնակցությունը: Օրինակ, եթե կազմակերպությունը չունի բիզնես ուսուցման ոլորտում դասավանդման փորձ, սակայն համագործակցում է տվյալ ոլորտում փորձառու մասնագետի հետ, կարող է դիմել ծրագրին: Միևնույն ժամանակ, ծրագրով սահմանված բիզնես գործունեության նվազագույն շեմը 3 տարի է:

Այս համատեքստում առաջարկում ենք՝

- վերանայել այս շեմը՝ սահմանելով նվազագույնը 2 տարի,
- վերանայել պահանջները՝ հնարավորություն տալով գնահատել ոչ միայն կազմակերպության, այլ նաև ներգրավված դասավանդող մասնագետների փորձն ու որակավորումը,
- հաշվի առնել մարզային առանձնահատկությունները, որտեղ բիզնես ուսուցում իրականացնող կազմակերպությունների քանակը սահմանափակ է:

Բացի այդ, ծրագրով նախատեսված է 50,000 ՀՀ դրամ ամսական կրթաթոշակ, սակայն գործնական ուսուցման լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են նաև նյութածախսեր: Առաջարկում ենք նախատեսել լրացուցիչ ֆինանսավորում՝

ամսական առնվազն 25,000 ՀՀ դրամի չափով՝ ուսուցման նյութական բաղադրիչը ապահովելու նպատակով:

Բարձրաձայնված հարցադրումներին Նախագահի կողմից տրվել են հստակ պարզաբանումներ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360

2026-04-13 13:09:11 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Արձանագրությունը կազմեց՝ Հասմիկ Ներսիսյանը